Ինչպես է աշխատանքն ազդում ձեր նպաստների վրա

Բովանդակություն

Որքա՞ն կարող եք վաստակել և միաժամանակ նպաստներ ստանալ	2
Ձեր հասույթը և նպաստները. որքա՞ն կստանաք	3
Ո՞ր եկամուտն է հաշվի առնվում... և ե՞րբ է այն հաշվի առնվում	3
Հատուկ կանոն կենսաթոշակային առաջին տարվա համար	3
Անհրաժե՞շտ է հաղորդել հասույթի փոփոխությունների մասին	4
Արդյո՞ք դուք հետագայում ավելի բարձր ամսական նպաստներ կստանաք, եթե նպաստները պահվում են աշխատանքի պատճառով	4
Կա՞ն արդյոք այլ դեպքեր, երբ աշխատանքի արդյունքում կավելանան ձեր նպաստները	5
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	5
Այեցելե՛ք մեր կայքէջը՝	5

Դուք կարող եք ստանալ կենսաթոշակային կամ կերակրողին կորցնողի կապակցությամբ սոցիալական ապահովության նպաստներ և միաժամանակ աշխատել: Սակայն եթե կենսաթոշակային լրիվ տարիքից ցածր եք և որոշակի սահմանված գումարից ավելի եք վաստակում, ապա ձեր նպաստները կկրճատվեն: Այնուամենայնիվ, կրճատված նպաստների գումարը իրականում չի կորչում: Ձեր նպաստը կբարձրացվի ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուն պես՝ հաշվի առնելով ավելի վաղ վաստակած հասույթից պահված նպաստները: (Ամուսինները/կանայք և վերապրող ժառանգները, ովքեր նպաստներ են ստանում, քանի որ իրենց խնամքի տակ ունեն անչափահաս կամ հաշմանդամ երեխաներ, լրիվ կենսաթոշակային տարիքում չեն ստանա բարձրացված նպաստներ, եթե նպաստները պահվել են աշխատանքի պատճառով):

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *եթե դուք ստանում եք սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստներ կամ Հավելյալ սոցիալական եկամտի վճարումներ, ապա ձեր նկատմամբ կիրառվում են տարբեր կանոններ: Ուստի դուք պետք է*

ձեր ողջ հասույթի մասին տեղեկությունները հայտնեք Սոցիալական ապահովությանը: Բացի այդ, տարբեր կանոններ են կիրառվում այն դեպքում, եթե աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս: Դիմեք մեզ, եթե աշխատում եք (կամ նախատեսում եք աշխատել) երկրից դուրս:

Որքա՞ն կարող եք վաստակել և միաժամանակ նպաստներ ստանալ

Եթե ծնվել եք 1956թ. հունվարի 2-ից մինչև 1957թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում , ապա ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը՝ կենսաթոշակային ապահովագրության նպաստներ ստանալու համար, հանդիսանում է 66 տարի և 4 ամիսը: *Եթե աշխատում եք և գտնվում եք լրիվ կենսաթոշակային տարիքում կամ ավելի մեծ եք, ապա ձեր բոլոր նպաստները կպահպանվեն՝ անկախ նրանից, թե որքան եք վաստակում:* Եթե լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա գոյություն ունի սահմանափակում, թե որքան կարող եք վաստակել և շարունակել ամբողջությամբ ստանալ սոցիալական ապահովության նպաստները: Եթե ողջ 2018 թվականի ընթացքում չի լրանում ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը, ապա $17,040 դոլարից ավել ստացված յուրաքանչյուր $2 դոլարի համար ձեր նպաստներից կպահվի $1 դոլար:

Եթե ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանում է 2018թ.-ի ընթացքում, ապա $45,360 դոլարից ավել ստացված յուրաքանչյուր $3 դոլարի համար ձեր նպաստներից կպահվի $1 դոլար՝ մինչև ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալու ամիսը:

Հետևյալ օրինակները ցույց են տալիս, թե այս կանոնները ինչպես կարող են կիրառվել ձեր դեպքում.

Ենթադրենք՝ դուք սոցիալական ապահովության նպաստների համար դիմել եք 62 տարեկանում՝ 2018թ. հունվարին, և ձեզ նպաստ է սահմանվել ամսական $600 դոլարի չափով (տարեկան $7,200 դոլար): 2018թ.-ի ընթացքում ծրագրում եք աշխատել և վաստակել $22,000 դոլար (որը $4,960 դոլարով բարձր է $17,040 դոլարի սահմանափաչից): Ձեր սոցիալական ապահովության նպաստից կպահվի $2,480 դոլար ($1 դոլար՝ սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր $2 դոլարի դիմաց): Այդ նպատակով ձեր նպաստի բոլոր վճարումները կպահվեն 2018թ. հունվարից մինչև 2018թ. մայիսն ընկած ժամանակահատվածում: Սկսած 2018թ. հունիսից՝ դուք կստանաք ձեր $600 դոլարի նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի յուրաքանչյուր ամիս՝ մինչև տարվա վերջ: 2019թ.-ին ձեզ կվճարվի 2018թ. մայիսին պահված հավելյալ $520 դոլարը:

Կամ ենթադրենք՝ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը չի լրանում տարվա սկզբին, այլ 2018թ. նոյեմբերին: Հունվարից մինչև հոկտեմբեր ընկած 10 ամիսների ընթացքում վաստակել եք $46,380 դոլար: Այդ ժամանակահատվածում ձեզնից կպահվի $340 դոլար (1 դոլար՝ $45,360 դոլարի սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր $3 դոլարի դիմաց): Այդ նպատակով կպահվի տարվա ձեր առաջին վճարագիրը: Սկսած 2018թ. փետրվարից՝ դուք կստանաք ձեր $600 դոլարին համարժեք նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի յուրաքանչյուր ամիս՝ մինչև տարվա վերջ: 2019թ.-ին ձեզ կվճարվի մնացած $260 դոլարը, որը պահվել էր 2018թ. հունվարին:

Ձեր հասույթը և նպաստները. որքա՞ն կստանաք

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է, թե որքան սոցիալական ապահովության նպաստներ կստանաք 2018թ վականի համար՝ հիմնված ձեր ամսական նպաստների և գնահատված հասույթի վրա:

Ողջ տարվա ընթացքում կենսաթոշակի լրիվ տարիքից ցածր անձանց համար		
Եթե ձեր սոցիալական ապահովության ամսական նպաստը կազմում է	***Եվ դուք վաստակում եք***	***Ձեր տարեկան նպաստը կլինի***
$700	$17,040 կամ պակաս	$8,400
$700	$18,000	$7,920
$700	$20,000	$6,920
$900	$17,040 կամ պակաս	$10,800
$900	$18,000	$10,320
$900	$20,000	$9,320
$1,100	$17,040 կամ պակաս	$13,200
$1,100	$18,000	$12,720
$1,100	$20,000	$11,720

Ո՞ր եկամուտն է հաշվի առնվում... և ե՞րբ է այն հաշվի առնվում

Եթե աշխատում եք այլ գործատուի համար, ապա հաշվվում է միայն ձեր աշխատավարձը՝ սոցիալական ապահովության հասույթի սահմանաչափին համապատասխանությունը գնահատելու նպատակով: Եթե սեփական գործով եք զբաղվում, ապա հաշվվում է միայն ինքնազբաղվածությունից ստացվող ձեր զուտ հասույթը: Հասույթի սահմանները որոշելու համար հաշվի չեն առնվում այլ եկամուտներ, ինչպիսիք են՝ այլ պետական նպաստներ, ներդրումային եկամուտներ, տոկոսային եկամուտ, կենսաթոշակային վճարումներ, ամենամյա վճարումներ և կապիտալի աճից ստացված եկամուտներ: Սակայն հաշվվում են աշխատողի մուծումները կենսաթոշակային կամ պաշտոնաթողության ֆոնդ, եթե այդ մուծումները ներառված են աշխատողի համախառն աշխատավարձի մեջ:

Եթե աշխատում եք աշխատավարձով, ապա եկամուտը հաշվվում է այն վաստակելու պահին, և ոչ՝ վճարման ժամանակ: Եթե դուք ունեք տվյալ տարում վաստակած եկամուտ, սակայն վճարումը կատարվել է հաջորդ տարի, ապա այն չպետք է հաշվվի որպես հասույթ այն տարվա համար, որում ստացել եք այն: Նմանատիպ օրինակներ են հանդիսանում հիվանդության կամ արձակուրդային կուտակված վարձատրությունները և պարգևավճարները:

Եթե սեփական գործով եք զբաղվում, ապա եկամուտը հաշվվում է այն ստանալու պահին, և ոչ այն վաստակելու ժամանակ՝ բացառությամբ այն դեպքի, երբ վճարվում եք սոցիալական ապահովության կենսաթոշակի համար իրավունակ դառնալուց հետո այն աշխատանքի համար, որը կատարել եք նախքան ձեր իրավունակ դառնալը:

Հատուկ կանոն կենսաթոշակային առաջին տարվա համար

Երբեմն այն անձինք, ովքեր կենսաթոշակի են անցնում տարվա կեսին, արդեն իսկ վաստակած են լինում տարեկան հասույթի սահմանաչափից ավել գումար: Այդ նպատակով առկա է հատուկ կանոն, որը կիրառելի է մեկ տարվա՝ սովորաբար առաջին կենսաթոշակային տարվա, հասույթի նկատմամբ: Այս կանոնի համաձայն՝ դուք կարող եք սոցիալական ապահովության

նպաստ ստանալ այն ամբողջ ամսվա համար, որում կենսաթոշակի եք անցել՝ անկախ ձեր տարեկան հասույթից:

Ողջ 2018թ.-ի ընթացքում լրիվ կենսաթոշակային տարիքը չլրացած անձը համարվում է կենսաթոշակառու, եթե ամսական հասույթը կազմում է $1,420 դոլար կամ պակաս:

Օրինակ՝ Ջոն Սմիթը թոշակի է անցնում 62 տարեկանում՝ 2018թ. հոկտեմբերի 30-ին: Մինչև հոկտեմբեր նա կվաստակի $45,000 դոլար: Նոյեմբերի սկզբին նա կես դրույքով աշխատանքի է անցնում՝ վաստակելով ամսական $500 դոլար: Չնայած նրա հասույթը տարվա կտրվածքով զգալիորեն գերազանցում է 2018թ.-ի տարեկան սահմանաչափը ($17,040 դոլար), նա կստանա սոցիալական ապահովության վճարում նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար: Դա հիմնավորվում է նրանով, որ նրա հասույթը այդ ամիսների ընթացքում կազմում է $1,420 դոլար կամ պակաս՝ լրիվ կենսաթոշակային տարիքից ցածր անձանց համար նախատեսված ամսական սահմանաչափը: Եթե պրն. Սմիթը նոյեմբեր կամ դեկտեմբեր ամսին վաստակի $1,420 դոլարից ավելի, ապա նա նպաստ չի ստանա տվյալ ամսվա համար: Սկսած 2019թ.-ից՝ նրա նկատմամբ կկիրառվի միայն տարեկան սահմանաչափը:

Եթե դուք սեփական գործով եք զբաղվում, ապա մենք հաշվի ենք առնում ձեր կատարած աշխատանքի ծավալը՝ որոշելու, թե արդյոք դուք կենսաթոշակառու եք: Դրա ձևերից մեկը աշխատանքի վրա ծախսված ձեր ժամանակի գնահատումն է: Ընդհանուր առմամբ, եթե սեփական գործով զբաղվող անձը ամսական աշխատում է 45 ժամից ավելի, ապա նա չի համարվում կենսաթոշակառու, սակայն 15 ժամից պակաս աշխատելու դեպքում՝ համարվում է կենսաթոշակառու: Եթե աշխատում եք ամսական 15-ից մինչև 45 ժամ, ապա դուք չեք համարվի կենսաթոշակառու, եթե կատարում եք այնպիսի աշխատանք, որը մեծ հմտություններ է պահանջում կամ դուք ղեկավարում եք խոշոր ձեռնարկություն:

Անհրաժե՞շտ է հաղորդել հասույթի փոփոխությունների մասին

Մենք սահմանում ենք սոցիալական ապահովության ձեր նպաստների գումարը 2018թ.-ի համար՝ այդ տարում ստացվելիք ձեր հասույթի հիման վրա: Եթե կարծում եք, որ ձեր հասույթը 2018թ.-ին այլ կլինի, քան նախապես մեզ հայտնել եք, ապա պետք է անմիջապես տեղեկացնեք մեզ:

Եթե ընտանիքի այլ անդամներ նպաստներ են ստանում ձեր աշխատանքի հիման վրա, ապա այն աշխատանքի հասույթը, որն ստանում եք կենսաթոշակի անցնելուց հետո, կարող է նվազեցնել նաև նրանց նպաստները: Սակայն եթե ձեր ամուսինը/կինը և երեխաները նպաստներ են ստանում՝ որպես ընտանիքի անդամներ, ապա իրենց սեփական աշխատանքից ստացած հասույթը կազդի միայն իրենց սեփական նպաստների վրա:

Եթե ձեր հասույթը հաշվարկելու հարցում օգնության կարիք ունեք, կապվեք մեզ հետ: Երբ զանգահարեք, ձեզ մոտ ունեցեք ձեր սոցիալական ապահովության համարը:

Արդյո՞ք դուք հետագայում ավելի բարձր ամսական նպաստներ կստանաք, եթե նպաստները պահվում են աշխատանքի պատճառով

Այո: Եթե ձեր կենսաթոշակային նպաստների
Այո: Եթե ձեր կենսաթոշակային նպաստների
մի մասը պահվում է ձեր հասույթի պատճառով, ապա ձեր ամսական նպաստը կավելանա ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ հաշվի առնելով այն ամիսները, որոնցում նպաստները պահվել են:

Օրինակ՝ ենթադրենք դուք կենսաթոշակային նպաստների համար դիմում եք ձեր 62 տարեկանը լրանալուց հետո՝ 2018թ.-ին, և ձեր վարձատրությունը կազմում է ամսական $953 դոլար: Այնուհետև կրկին աշխատանքի եք անցնում, և ձեր 12 ամսվա նպաստները պահվում են:

Մենք կվերահաշվարկենք ձեր նպաստը ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ 66 տարի և 4 ամսում, և կվճարենք ամսական $1,018 (հաշվված այսօրվա դոլարի արժեքով): Կամ էլ, հնարավոր է, որ 62-ից մինչև 66 տարի և 4 ամիսն ընկած ժամանակահատվածում վաստակում եք այնքան, որ այդ տարիների բոլոր նպաստները պահվում են: Այդ դեպքում, ձեր 66 տարի և 4 ամիս տարիքը լրանալուց հետո ձեր կվճարվի ամսական $1,300 դոլար:

Կա՞ն արդյոք այլ դեպքեր, երբ աշխատանքի արդյունքում կավելանան ձեր նպաստները

Այո: Յուրաքանչյուր տարի մենք վերանայում ենք սոցիալական ապահովության նպաստներ ստացողների գործերը, որոնք աշխատում են: Եթե հասույթի ձեր ամենավերջին տարին լինի ամենաբարձր եկամտով տարիներից մեկը, ապա մենք կվերահաշվարկենք ձեր նպաստը և կվճարենք հասանելիք բարձրացումը: Սա ավտոմատ գործընթաց է, և նպաստները վճարվում են հաջորդ տարվա դեկտեմբերին: Օրինակ՝ 2018թ. դեկտեմբերին դուք ձեր 2017թ.-ի եկամուտների հավելում կստանաք, եթե այդ եկամուտներն ավելացրել են ձեր նպաստը: Այդ բարձրացումը հետադարձ ուժ կունենա 2018թ. հունվարի նկատմամբ:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական

ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10069-AM | January 2018
Ինչպես է աշխատանքն ազդում ձեր նպաստների վրա
How Work Affects Your Benefits (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: